պել հայկական շրջանների իշխանութիւնը, բայց նիւթական միջոցների ու պետական մեքենայի բացակայութեան պատճառով յաջողութիւն չունեցաւ։

Գարնան բացւելով՝ անիշխանութիւնը աւելի եւս սաստկացաւ: Մայիսին սկսեց քոչը· Թուրք քոչւորները պատրաստւում էին իրենց հօտերով բարձրանալ Զանգեզուրի սարերը: Յաջողութեան դէպքում այդ պիտի նշանակէր ստոյգ մահ զանգեզուրցիների համար: Եւ ահա, ինքնաբերաբար, իրարից անկախ, Սիսեանում, Գորիսում, Ղափանում ու Մեղրիում կազմւեցին տեղական մարմիններ, որոնք իրենց ձեռքն առին ինքնապաշտպանութեան գործը: Նշանակեցին շրջանապետներ և անցան կազմակերպական աշխատանքի:

Մայիսի վերջերին Զանգեզուր հասաւ և Խնուսի, Սասունի ու Վանի գաղթականների մի մասը՝ զինւած ուժերով: Խնուսցիների մի հարիւրեակը Եղոյի գլխաւորութեամբ և վանեցիների մի վաշտը իրենց դրին Սիսեանի մարմնի տրամադրութեան տակ, իսկ Սասունցի Մանուկը, Մուշեղը և Զոլօն երեք հարիւրեակով անցան Գորիս: Այդ ուժերը կազմեցին այն կորիզը, որի շուրջ համախմբւեցին զանգեզուրցի մարտիկները:

Յունիսի սկզբներին, հազարաւոր զինւած քոչւորներ խուժեցին Հագարի գետի ափին՝ պատրաստ զէնքի ուժով բանալու սարերի ճամբան: Նրանց օգնութեան էին եկել և Հաջի-Սամլուի ու Մուսուլմանլարի Թուրքերը: Հարամի Դիւզ վայրում տեղի ունեցան Թուրքերի և հայերի միջև արիւնահեղ ճակատամարտներ, և Թուրքերը պարտւած՝ դիմեցին փախուստի՝ կւսի դաշտում Թողնելով բազմաթիւ դիակներ: Կարճ ժամանակ յետոյ, Հաջի-Սամլուի Թուրքերը յարձակւեցին Սիսեանի վրա՝ կամենալով միանալ Թրքական Ջուլ շրջանին և այդպիսով Զանգեզուրը կտրել Դարալագեազից, բայց ջարդւած քշւեցին այստեղից էլ: Ընդհարումներ եղան և Չէյվա—Հագարակ գծի վրա, Մեղրիում· այստեղ եւս Թուրքերը չդիմացան ու փախան Օրդուբաթի կողմերը:

Այսպիսով, Զանգեզուրն ազատւեց քոչի մղձաւանջից: Յուլիսին Սիսեան եկաւ Շուշիի գնդի սպայակոյտը՝ գնդապետ Մելիք-Շահնազարեանի գլխաւորութեամբ: Իսկ, յուլիսի վերջերին, զանգեզուրցիների կողմից Երևան ուղարկւեց մի յատուկ պատւիրակութիւն՝ յայտնելու համար Հայաստանի կառավարութեան, որ Զանգեզուրը վճռել է մնալ Հայաստանի մաս և պատրաստ է մինչև մահ կռւել, և խնդրելու, որ Հայաստանի կառավարութիւնը Զանգեզուր ուղարկէ 8—10 ձեռնհաս սպայ ու դրամական միջոց· Հայաստանի կառավարութեան վիճակն այն օրերին այնպէս էր, որ, ի հարկէ, չօշափելի օգնութիւն չէր կարող հասցնել· վարչապետ Յ. Քաջազնունին սահմանափակւեց միայն բարոյական քաջալերանքով: Ըստ էութեան, աւելի դրական չեղաւ և ներքին գործոց նախարար Արամի արածը, բայց նա խոստացաւ կենդանի կապ պահել Զանգեզուրի հետ և մօտիկ ապագայում ուղարկել մի ձեռնհաս հրամանատար ու սպաներ: